ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 299-Ա «17» 09 2021թ.

ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2021 թվականի սեպտեմբերի «17» -ի № 299 - Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հաշվի առնելով Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գեր ծանրաբեռնված աշխատանքը, բաժնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների («Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայությանը հանձնված շենք-շինությունների ու հիմնական միջոցների «ՀԾ-ձեռնարկություն» համակարգի ծրագրով ըստ տեսակների հաշվառում, անհատույց օգտագործման տրամադրված գույքի առանձնացված ցանկերի կազմում, դրանց սահմանված կարգով արտահաշվեկշռում արտացոլում, օտարման ենթակա շարժական գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթների պատրաստում, հաշվառված պետական գույքի վերաբերյալ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին տեղեկատվության տրամադրում) իրականացման համար Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնում պայմանագրային հիմունքներով նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

1) տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ հարկային օրենսգրքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի

մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 30.01.2017թ.-ի թիվ 27-Ն հրամանի, իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի և «ՀԾ-հաշվապահ»ծրագրի անհրաժեշտ իմացություն.

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն.

4) հաշվապահական հաշվառման ոլորտի անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում և այդ բնագավառում աշխատանքային փորձ.

5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքը, մասնավորապես՝

ա. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայությանը հանձնված շենք-շինությունների ու հիմնական միջոցների գույքի հանձնման-ընդունման ակտերի հիման վրա «ՀԾ-ձեռնարկություն» համակարգի ծրագրով ըստ տեսակների հաշվառում, մաշվածության հաշվարկի իրականացում.

բ. անհատույց օգտագործման տրամադրված գույքի առանձնացված ցանկերի կազմում, դրանց սահմանված կարգով արտահաշվեկշռում արտացոլում.

գ. օտարման ենթակա շարժական գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթների պատրաստում.

դ. հաշվառված պետական գույքի վերաբերյալ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին տեղեկատվության տրամադրում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է չորս ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«դ»-ը ենթակետորով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջարդյունքների չափանիշներն են՝

ա. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայությանը հանձնված շենք-շինությունների ու հիմնական միջոցների գույքի հանձնման-ընդունման ակտերի հիման վրա «ՀԾ-ձեռնարկություն» համակարգի ծրագրով ըստ տեսակների հաշվառված, մաշվածության հաշվարկն իրականացված է.

բ. անհատույց օգտագործման տրամադրված գույքի առանձնացված ցանկերը կազմված, դրանց սահմանված կարգով արտահաշվեկշռում արտացոլված է.

գ. օտարման ենթակա շարժական գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթները պատրաստված են.

դ. հաշվառված պետական գույքի վերաբերյալ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին տեղեկատվությունը տրամադրված է: